ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2017Թ.-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2017թ.-ի տարեկան հաստատված ծրագրի շրջանակներում<<Ներքին աուդիտի մասին>>ՀՀ օրենքի,ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի համաձայն ներքին աուդիտի բաժնի կողմից 2017թ.-ին նախատեսվել և իրականացվել է 40 միավոր աուդիտ, որից 20 միավոր մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում,3 միավոր առողջապահական ՓԲԸ-ներում, 5 միավոր առողջապահական ՊՈԱԿ-ներում, 1 միավոր մարզային ենթակայության Երկրագիտական թանգարան ՊՈԱԿ-ում, 1 միավոր մարզային ենթակայության երաժշտական դպրոց ՊՈԱԿ-ում, 1 միավոր մարզային ենթակայության մշակույթի կենտրոն ՊՈԱԿ-ում ,2 միավոր մշակութային միջոցառումներ, 4 միավոր մարզպետարանի գնումների գործընթաց, 3 միավոր մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում: ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ ,մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում և գնումների գործընթացի գնումների օրենսդրությանը համապատասխանության աուդիտ՝ գործունեության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության աուդիտ :Նշված ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում,մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում և գնումների գործընթացի մասով աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա,փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները,խնդիրները,աուդիտի արդյունքները , եզրահանգումները , առաջարկությունները , հանձնարարականները : Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում,ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում,ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում,հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը,ներքին հսկողությանը,գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները : Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 10 նիստ , քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, կայացվել համապատասխան որոշումներ: Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների, ՓԲԸ-ների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին տրվել են հանձնարարականներ , ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ : Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն և վերահսկողության գործընթաց:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, ծրագրային մուտքագրմամբ ,ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան